ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07.03.2019թ.
ժամը 11 00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Մասնակիցների՝ սույն ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ սույն ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Սահակյան)

1.1 «***ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/3***» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ նրա կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետի բ) պարբերությամբ պահանջվող հանձնման–ընդունման ակտերով հնարավոր չէր գնահատել հրավերով սահմանված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրի պատշաճ կատարումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել տվյալ անհամապատասխանությունը: «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունը, և հանձնաժողովը շարունակեց հայտերի գնահատման նիստը:

Քանի որ 05.03.2019թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված՝ Կարգի կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան տեղեկատվության համաձայն՝ մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն (պահանջներն) առկա են, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 13.03.2019թ.-ին հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Սինխրոն» ՍՊԸ-ի և 2-րդ

չափաբաժնի մասով «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ԳՀԾՁԲ-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ս.Սարգսյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան